ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2025 թվականի №1789 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ 7-ՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1756.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արագածի 7-րդ թաղամասում գտնվող 1756.07 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Արագածի 7-րդ թաղամաս, 4/5 հողամաս**

2025-08-18 16:18:26 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<19>> օգոստոսի 2025 թվականի N 1788-Ա

## ՄԵԼԱՆՅԱ ՀԱՅԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ի նքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Մելանյա Հայկի Հարությունյանի 2025 թվականի օգոստոսի 15-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Մելանյա Հայկի Հարությունյանին պայմանագրային հիմունքներով 2025 թվականի օգոստոսի 20-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի փորձագետ՝ նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

**2.** Ամսական աշխատավարձի չափը սահմանել 328.000 ( երեք հարյուր քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելանյա Հայկի Հարությունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

19

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<19>> օգոստոսի 2025 թվականի N 1787-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ << ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Լուսինե Սարգսի Պետրոսյանի 2025 թվականի օգոստոսի 15-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու << Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Սարգսի Պետրոսյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2025 թվականի օգոստոսի 20-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 24 աշխատանքային օր՝ 2025 թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Լուսինե Սարգսի Պետրոսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության ֆոնդապահ Կարինե Վազգենի Գաբրիելյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Սարգսի Պետրոսյանին և Կարինե Վազգենի Գաբրիելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՎ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» օգոստոսի 2025 **թվականի** N1786-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ 72/1 ՀԱՍՑԵԻ 70.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ֆուրմանովի 72/1 հասցեի 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը, որը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Շահեն Իկիլիկյանին, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N04062025-08-0049 վկայականը, կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0732-0199): Նշված հողամասում հասարակական կառուցապատում իրականացնելու նպատակով սեփականատերը դիմել է փոփոխել հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, հիմք ընդունելով քաղաքացի Շահեն Իկիլիկյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 16-ին N 8141 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ֆուրմանովի 72/1 հասցեի 70.0 (յոթանասուն) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:

2025-08-19 11:24:38 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» օգոստոսի 2025 **թվական** N1785-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈԲԵՐՏ ԿԱՐԼԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանը (անձնագիր՝ AL 0558266, տրված՝ 2023թականի դեկտեմբերի 25-ին 065-ի կողմից, հաշվառված՝ քաղաք Գյումրի, Ղանդիլյան փողոց 93 շենք, 1 հասցեում), 2024 թվականի հոկտեմբերի 17-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Ղանդիլյան 93 շենք № 1 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Անդրկովկասյան երկաթուղիների քաղաքացիական կառուցվածքների Երևանի ուղեմասի 1972 թվականի հունիսի 14-ին տրված № 1325 օրդերի համաձայն Սևյան 93 (ներկայիս Ղանդիլյան) շենքի 1 բնակարանը հատկացվել է Կառլեն Աբրահամյանի 4 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 տղային :

Քաղաքացիներ՝ Կարլեն Աբրահամյանը, Լևոն Կարլենի Աբրահամյանը, Անահիտ Արամ Աբրահամյանը մահացել են (հիմք՝ ԱԱ 113632, ԲԱ 368790, III-ԵՌ № 379520 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Անդրկովկասյան երկաթուղիների քաղաքացիական կառուցվածքների Երևանի ուղեմասի 1972 թվականի հունիսի 14-ին տրված № 1325 օրդերը, 2024 թվականի հունիսի 14-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ № 240651065451, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի հուլիսի 15 –ի №1256 տեղեկանքները, ՀՀ Գյումրի 2 բաժնի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի № 94/20-1856 գրությունը, Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 13-ի №2640-Ա որոշումը, Ռոբերտ Կարլենի Աբրահամյանի անձնագրի պատճենը, 2024 թվականի հուլիսի 9-ի Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության եզրակացությունը, 2024 թվականի մայիսի 21-ի «Գյումրի» ցանցի տեղեկանքը :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի հոկտեմբերի 17-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի օգոստոսի 12-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Մաքսիմ Գորկու փողոց 2-րդ փակուղի 26 հասցեի 25.05(քսանհինգ ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 03072025-08-0017 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Սևյան 93 (ներկայիս Ղանդիլյան 93) շենքի 1 բնակարանը 1972 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Անդրկովկասյան երկաթուղիների քաղաքացիական կառուցվածքների Երևանի ուղեմասի 1972 թվականի հունիսի 14-ի № 1325 օրդեր):

գ) Շիրակ Գյումրի Ղանդիլյան փողոց 93 շենք 1 հասցեում հաշվառված բնակվում է՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանը 1984 թվականից, (հիմք՝ 2024թվականի հունիսի 14-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ № 240651065451 տեղեկանք, Գյումրի 2 բաժնի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի № 94/20-1856 գրություն, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի հուլիսի 15 –ի №1256 տեղեկանք:

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի հունիսի 18-ի N ՍՏ-18062024-99-0428 տեղեկանք):

ե) Գյումրու Ղանդիլյան փողոց 93 շենքի 1 հասցեի կրող տարրերը երկրաշարժից ստացել են առաջին-երկրորդ աստիճանի վնասվածքներ: Տան կրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար (հիմք՝ 2024 թվականի հուլիսի 9-ի Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության եզրակացություն):

զ) Քաղաքացի Ռոբերտ Աբրահանյանը /քաղաք Գյումրի, Ղանդիլյան փողոց 93 շենք 1բնակարան/ «Գյումրի» էլեկտրական ցանցում հանդիսանում է բաժանորդ 2024 թվականի ապրիլ ամսից մինչև օրս, իսկ 2002 թվականից մինչև 2024 թվականի մարտ ամիսը բաժանորդ է հանդիսացել մայրը՝ Անահիտ Աբրահամյանը (հիմք՝ 2024 թվականի մայիսի 21-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գյումրի» ցանցի տեղեկանք):

է) Գյումրի քաղաք, Ղանդիլյան փողոց 93 շենքի 1 բնակարան հասցեագրությամբ հաշվառած 25.05քմ ընդհանուր մակերեսով շինությանը և դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք ,Մաքսիմ Գորկու փողոց, 2-րդ փակուղի, 26 բնակելի տուն (հիմք՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի Գյումրի համայնքի ղեկավարի №2640-Ա որոշում):

ը) Քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանը Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 93 շենք №1 հասցեի բնակարանը վարձակալել է 1972 թվականի հունիսի 14-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա

որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ի կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների

բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Ռոբերտ Կարլենի Աբրահամյանի դիմումը բավարարեց:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի,55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Մաքսիմ Գորկու փողոց 2-րդ փակուղի 26 հասցեի 25.05(քսանհինգ ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝
   1) Ռոբերտ Կարլենի Աբրահամյանին ծնված՝ 1967 թվականին
   որպես սեփականություն:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանին:
4. Քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանին եռօրյա ժամկետում իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռոբերտ Կարլենի Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝**

2025-08-18 16:29:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թվական քաղաք Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

«19» օգոստոսի **2025 թվականի N1784**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ N72Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 157.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 40.16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աշոտ Սարգսի Նաջարյանին պատկանող Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց N72ա հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 157.73 (հայուր հիսունյոթ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, (որից 41.1(քառասունմեկ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները և ընդհանուր օգտագործման 4.0 (չորս) քառակուսի մետր մակերեսով պարիսպը ֆիքսված տեխնիկական անձնագրում) և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 40.16(քառասուն ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Աշոտ Սարգսի Նաջարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Սարգսի Նաջարյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N19812 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Քաղաքացի Աշոտ Սարգսի Նաջարյանին (ծնված 1951 թվականի հուլիսի 12-ին) պատկանող Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց N72ա հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 157.73 (հայուր հիսունյոթ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններից, տեխնիկական անձնագրում ֆիքսված 41.1(քառասունմեկ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները և ընդհանուր օգտագործման 4.0 (չորս) քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
2. Ճանաչել քաղաքացի Աշոտ Սարգսի Նաջարյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց N72ա հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 40.16(քառասուն ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-18 16:02:52 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«19» օգոստոսի 2025 **թվականի** N1783-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՆ ՏՐՎԱԾ N144/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արամ Ղարիբյանին և Քրիստինա Փափանյանին Գյումրի քաղաքի Վ. Տերյան փողոց 99/7 հասցեով առևտրի (ընդլայնվող մասի ընդ. արտաքին մակ.- 316.0 քառ.մ; երրորդ կատեգորիա) օբյեկտի ընդլայնման և վերակառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի օգոստոսի 1-ին տրվել է N144/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի օգոստոսի 1-ին տրված N144/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

2025-08-18 10:01:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«19» օգոստոսի 2025 **թվականի** N1782-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության շախմատի տղամարդկանց առաջնության կիսաեզրափակիչ 2025 թվականի օգոստոսի 22–30–ը Երևան քաղաքում կայանալիք մրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով շախմատի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի օգոստոսի 19-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության շախմատի տղամարդկանց առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին գործուղման ծախսերի 2025 թվականի օգոստոսի 22–30–ը Երևան քաղաք գործուղել 6 մարզիկի և 2 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (մարզիչի բոլոր ծախսերը, մարզիկի՝ միայն ճանապարհածախս) 177.800(մեկ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

2025-08-19 09:56:58 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
օգոստոսի 19-ի N 1782-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության շախմատի տղամարդկանց առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Թարգյան | Հարություն | մարզիկ | AL0258132 | 11802050902200 | 3.000 |
| 2. | Վարդանյան | Արման | մարզիկ | AL0246124 | 1570030239737500 | 3.000 |
| 3. | Տիրատուրյան | Դավիթ | մարզիկ | AS0512684 | 1510042134100100 | 3.000 |
| 4. | Պետրոսյան<br>Պետրոսյան | Համլետ<br>Տաթևիկ | մարզիկ<br>ծնող | AT0651580 | 19300850840300 | 3.000 |
| 5. | Անտոնյան<br>Անտոնյան | Սերգեյ<br>Լևոն | մարզիկ<br>ծնող | 016084246 | 2050157594701001 | 3.000 |
| 6. | Առաքելյան<br>Առաքելյան | Սյուզաննա<br>Համիկ | մարզիկ<br>ծնող | 009321167 | 11802015832500 | 3.000 |
| 7. | Գրիգորյան | Հայկ | մարզիչ | 015821622 | 1510043477050100 | 79.900 |
| 8. | Խաչատրյան | Վահագն | մարզիչ | AL 0451464 | 15100324400244 | 79.900 |
| Ընդամենը | | | | | | **177.800** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N 1781 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԻՆԵ ԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ 107 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նարինե Ազարյանի 2025 թվականի օգոստոսի 06-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 06-ին 11119-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նարինե Ազարյանին Գյումրի քաղաքի Շիրազի 107 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1.32 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 06-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նարինե Ազարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1780 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԻՐՈՒՇ ԷՎՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԿՈՒ 109 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սիրուշ Էվոյանի 2025 թվականի օգոստոսի 08-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 08-ին 11320-2025 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սիրուշ Էվոյանին Գյումրի քաղաքի Գորկու 109 6/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 08-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Սիրուշ Էվոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025.08.18 12:25:41 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**2025թ. ք. Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1779Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԻԿ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ 99/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նորիկ Զաքարյանի 2025 թվականի օգոստոսի 11-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 11-ին 11390-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նորիկ Զաքարյանին Գյումրի քաղաքի Տերյան 99/2 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1.3 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 11-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նորիկ Զաքարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1778 Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆ ՊՈԼԵՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԵՎՈՆ ՄԱԴՈՅԱՆ 115 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմեն Պոլեյանի 2025 թվականի օգոստոսի 06-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 06-ին 11108-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արմեն Պոլեյանին Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան 115 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 06-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արմեն Պոլեյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1777 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 21.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 21.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (17.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 21.61(քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 21.61(քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (17.3(տասնյոթ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023L9YWHG ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Տիգրան Մեծ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 21.61(քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 21.61(քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (17.3(տասնյոթ ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Թամարա Ազատի Արսենյանին և Վահրամ Արամի Սարգսյանին :

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-18 12:19:25 GMT+4
Հաստատված է ԷՍԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2 22 00; Ֆաքս (+374 312) 3 26 06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N 1776 Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՀԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ(1/2 ՄԱՍ) ԵՎ ՀԱՍՄԻԿ ԱՂԱՆԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ(1/2 ՄԱՍ) ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՈՍՕՂՅԱՆ ՓՈՂՈՑ № 9 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 53.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 (ՄԵԿ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 17.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Վահան Վոլոդյայի Դավթյանին(1/2 մաս) և Հասմիկ Աղանիկի Դավթյանին(1/2 մաս) բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ N 5530 տրված 01.08.2024թ., N 5529 տրված 01.08.2024թ.) Գյումրի քաղաքի Հանեսօղյան փողոց N 9 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 17.88 (տասնյոթ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված են 53.92(հիսուներեք ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինություններ և ինքնակամ բացվել է 1(մեկ) դուռ:
Քաղաքացի Վահան Վոլոդյայի Դավթյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի նրա վրա առկա շինությունների և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023ZBRHK4 ծածկագիրը և հաշվի առնելով քաղաքացի Վահան Վոլոդյայի Դավթյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 13-ին N 22110 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացիներ Վահան Վոլոդյայի Դավթյանին (1/2 մաս)(ծնված 1973 թվականի հոկտեմբերի 14-ին) և Հասմիկ Աղանիկի Դավթյանին (1/2 մաս) (ծնված 1938 թվականի մայիսի 1-ին) բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հանեսօղյան փողոց N 9 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 17.88 (տասնյոթ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2.Քաղաքացիներ Վահան Վոլոդյայի Դավթյանին (1/2 մաս) և Հասմիկ Աղանիկի Դավթյանին (1/2 մաս) բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հանեսօղյան փողոց N 9 հասցեի տան

հողամասում ինքնակամ կառուցված 53.92(հիսուներեք ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական և ինքնակամ բացված 1(մեկ) դուռը օրինականը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 2725 (երկու հազար յոթ հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահան Վոլոդյայի Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4.Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-15 11:08:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1775-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՐԱԼԲԵՐԳ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 146.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 97.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (84.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԿԵՏԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ֆորալբերգ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 146.49(մեկ հարյուր քառասունվեց ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 97.57(իննսունյոթ ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (84.24(ութսունչորս ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտովերանորոգման կետը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023D7A5BX ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Ֆորալբերգ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 146.49(մեկ հարյուր քառասունվեց ամբողջ քառասունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 97.57(իննսունյոթ ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (84.24(ութսունչորս ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտովերանորոգման կետը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված ավտովերանորոգման կետը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արման Ջանիկի Ասատրյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-18 12:08:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«18» Օգոստոսի 2025 թվականի №1774Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 8-1 ՇԵՆՔ, 33 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №11072025-08-0050) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վրեժ Մուրադյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №10968 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեման և հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամաս 8-1 շենք, 33 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №11072025-08-0050) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **42.9** քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամաս, 8/1 շենք, 33 բնակարան**
2) **53.7** քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամաս, 8/1 շենք, 33/1 բնակարան**

2025-08-18 11:44:43 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի №1773-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 8-1 ՇԵՆՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 8-1Բ ՇԵՆՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 8-1Գ ՇԵՆՔ, ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 8-1Ե ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0083-0092-001) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մուշ-2 թաղամաս 8-1 շենք, Մուշ-2 թաղամաս 8-1բ շենք, Մուշ-2 թաղամաս 8-1գ շենք, Մուշ-2 թաղամաս 8-1ե շենք հասցեագրություններով անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-0083-0092-001) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մուշ-2 թաղամաս, 8/1 շենք**

2025-08-18 11:42:21 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1772-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 46/3 ՀԱՍՑԵԻ 53,03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ 53,03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/3 հասցեի հողամասը և սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վաչագան Մկրտչի Վարդանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24012022-08-0051 վկայական):

Քաղաքացի Վաչագան Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/3 հասցեի 53,03 (հիսուներեք ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/3 հասցեի 53,03(հիսուներեք ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Վաչագան Վարդանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մարտի 12-ին N 3476 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/3 հասցեի 53,03 (հիսուներեք ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, գործառական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/3 հասցեի 53,03(հիսուներեք ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Վաչագան Մկրտչի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-18 11:49:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1771-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 46/2 ՀԱՍՑԵԻ 123,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ 123,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/2 հասցեի հողամասը և սպասարկման օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վաչագան Մկրտչի Վարդանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24012022-08-0051 վկայական):

Քաղաքացի Վաչագան Վարդանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/2 հասցեի 123,3 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/2 հասցեի 123,3(մեկ հարյուր քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Վաչագան Վարդանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի մարտի 12-ին N 3476 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/2 հասցեի 123,3 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, գործառական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փողոց N 46/2 հասցեի 123,3(մեկ հարյուր քսաներեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտի նպատակային նշանակությունը հասարակականից բնակելիի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Վաչագան Մկրտչի Վարդանյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-18 11:51:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի №1770-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 06-Ի №1641–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 06-ի №1641–Ա որոշմամբ համայնքային սեփականություն համարված և օրինական ճանաչված անշարժ գույքին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Օդանավակայանի 1-ին թաղամաս, 17 բնակելի տուն**

2025-08-15 16:30:46 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N 1769-Ա

**<<ԱՐԴՇԻՆԲԱՆԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՅԻ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի հուլիսի 31-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 05-ին 11050-2025 թվագրմամբ)՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերությանը Գյումրի քաղաքի Գայի 7 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) արտաքին գովազդի լուսատախտակ ընդհանուր 1□35 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 05-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Արդշինբանկ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ Ա□ Բադալովին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-08-18 16:51:41 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1768 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 08-Ի N 1682-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2 կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Անվավեր ճանաչել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 08-ի «անհատ ձեռնարկատեր Աշոտ Մելքոնյանին Գյումրի քաղաքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու (տեղաբաշխելու) թույլտվություն տալու մասին»» N 1682-Ա որոշումը:

2025-08-18 09:28:26 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *ՈՐՈՇՈՒՄ*

*«18» Օգոստոսի 2025 թվականի N1767*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N175 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 12.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 24.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (16.05 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N175 հասցեին կից, 12.0 (տասներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 24.0 (քսանչորս) քառակուսի մետր արտաքին (16.05(տասնվեց ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի տան հատված, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Արկադի Մխիթարյանը և Լյուսյա Փալանջյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023KBZBFZ ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N175 հասցեին կից, 12.0 (տասներկու) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 24.0(քսանչորս) քառակուսի մետր արտաքին (16.05(տասնվեց ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի տան հատվածը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Արկադի Մխիթարյանին և Լյուսյա Փալանջյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *ՈՐՈՇՈՒՄ*

**«18» օգոստոսի 2025 թվականի N1766**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ N175 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 9.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 18.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (5.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N175 հասցեին կից, 9.4 (ինը ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 18.8 (տասնութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (5.5(հինգ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի տան հատված, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Արկադի Մխիթարյանը և Լյուսյա Փալանջյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023Y3SFGT ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոց N175 հասցեին կից, 9.4 (ինը ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 18.8 (տասնութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (5.5(հինգ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի տան հատվածը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Արկադի Մխիթարյանին և Լյուսյա Փալանջյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-15 15:50:57 GMT+4
Համաձայնված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի N1765

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑ N197 ՀԱՍՑԵԻ 48.43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՅՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 110.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N197 հասցեում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, 110.6(հարյուր տասն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում կառուցվել է 48.43(քառասունութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը ու այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սուսաննա Վոլոդյայի Հովհաննիսյանը:

Քաղաքացի Սուսաննա Վոլոդյայի Հովհաննիսյանի լիազորված անձ Կարինե Դանիելյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Սուսաննա Վոլոդյայի Հովհաննիսյանի լիազորված անձ Կարինե Դանիելյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի N2037 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Սուսաննա Վոլոդյայի Հովհաննիսյանի (ծնված 1960 թվականի սեպտեմբերի 17-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոց N197 հասցեի 110.6(հարյուր տասն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված 48.43(քառասունութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով տան նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-08-15 15:47:31 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*«18» օգոստոսի 2025 թվականի N1764*

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԵՆ ԼՅՈՎԱՅԻ ԹՈՒԹԽԱԼՅԱՆԻՆ ԵՎ ՍԵԴԱ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ N2/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 25.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (18.25ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ 21.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Կարեն Լյովայի Թութխալյանին և Սեդա Գագիկի Հակոբյանին պատկանող Գյումրի քաղաքի Վ.Խաչատրյան փողոց N2/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 25.0(քսանհինգ) քառակուսի մետր արտաքին (18.25 (տասնութ ամբողջ քսանհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով խանութ և 21.0 (քսանմեկ) քառակուսի մետր մակերեսով շվաքարան:

Քաղաքացի Կարեն Լյովայի Թութխալյանի լիազորված անձ Սամվել Գևորգյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023XLT6JL ծածկագիրը, քաղաքացի Կարեն Լյովայի Թութխալյանի լիազորված անձ Սամվել Գևորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականին N11245 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Կարեն Լյովայի Թութխալյանին և Սեդա Գագիկի Հակոբյանին պատկանող Գյումրի քաղաքի Վ.Խաչատրյան փողոց N2/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 25.0 (քսանհինգ) քառակուսի մետր արտաքին (18.25 (տասնութ ամբողջ քսանհինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով խանութը և 21.0 (քսանմեկ) քառակուսի մետր մակերեսով շվաքարանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 250700 (երկու հարյուր հիսուն հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

2025-08-15 15:49:17 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի №1763-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԱՄՈ ՓՈՂՈՑ 42Ա ՇԵՆՔ 51 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 74.07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Գյումրի քաղաք, Կամո փողոց 42ա շենք 51 բնակարան հասցեագրությամբ 74.07 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կամոյի փողոց, 42ա շենք, 51 բնակարան**

2025-08-15 16:17:43 GMT+4
Հաստատված է ԷՍՏՆԳ-ի կողմից

mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի №1762-Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍՎԵՐԴԼՈՎԻ ՓՈՂՈՑ, 118Ա ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Օհանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №11092 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ժառանգության իրավունքով քաղաքացի Հարություն Օհանյանին պատկանող Գյումրի քաղաք, Սվերդլովի փողոց, 118ա բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ղորղանյան փողոց, 118/1 բնակելի տուն**

2025-08-15 09:49:05 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N 1761-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 70 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՒՍՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 74,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 101,87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Արթուր Գալուստի Փահլևանյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի N 70 հասցեի բնակելի տանը կից 101,87 (մեկ հարյուր մեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արթուր Գալուստի Փահլևանյանը:

Քաղաքացի Արթուր Գալուստի Փահլևանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Գալուստի Փահլևանյանի դիմումները (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 22-ին N 25210 և 2025 թվականի օգոստոսի 07-ին N 11242 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Արթուր Գալուստի Փահլևանյանի (ծնված 1970 թվականի հոկտեմբերի 19-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոցի N 70 հասցեի բնակելի տանը կից 101,87 (մեկ հարյուր մեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա բնակելի շինությունների նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Գալուստի Փահլևանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1760-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 1077-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարիբջանյանի խճուղի N 1/1 հասցեի 356,27 քառակուսի մետր արտաքին, 328,68 քառակուսի մետր ներքին մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը, 356,27 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Սուրեն Սամվելի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1077-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ որոշման մեջ տեղի է ունեցել վրիպում:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարիբջանյանի խճուղի N 1/1 հասցեի 356,27 քառակուսի մետր արտաքին, 328,68 քառակուսի մետր ներքին մակերեսով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտը, 356,27 քառակուսի մետր մակերեսով հողամասը քաղաքացի Սուրեն Սամվելի Հովհաննիսյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 1077-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1. Որոշման 3-րդ կետից հանել «Ռաֆիկ Թադևոսի Չաքոյա» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2025-08-15 15:24:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1759-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ N 35 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 1-ին փակուղու N 35 հասցեի հողամասը պատկանում է քաղաքացի Լևոն Համբարձումի Կարապետյանին (հիմք՝ առուվաճառքի պայմանագիր, տրված 1995 թվականի հուլիսի 17-ին):

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված կողմնային չափերով և տեղադիրքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Լևոն Համբարձումի Կարապետյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 22.07.2025թ. N 10275 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից կազմված, քաղաքացի Լևոն Համբարձումի Կարապետյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 1-ին փակուղու N 35 հասցեի հողամասի հատակագիծը՝ 600,0 (վեց հարյուր) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և սեփականության իրավունքի գրանցման նպատակով:

2025-08-15 15:23:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» օգոստոսի 2025 **թվականի** N1758 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ N 37 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 1-ին փակուղու N 37 հասցեի հողամասը պատկանում է քաղաքացի Գայանե Սերյոժայի Կարապետյանին (հիմք՝ առուվաճառքի պայմանագիր, տրված 1995 թվականի հուլիսի 17-ին):

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված կողմնային չափերով և տեղադիրքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Լևոն Համբարձումի Կարապետյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 22.07.2025թ. N 10274 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից կազմված, քաղաքացի Գայանե Սերյոժայի Կարապետյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի 1-ին փակուղու N 37 հասցեի հողամասի հատակագիծը՝ 600,0 (վեց հարյուր) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և սեփականության իրավունքի գրանցման նպատակով:

2025-08-18 11:40:17 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի №1757-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱՅԳԱԲԱՑԻ 4-ՐԴ ՇԱՐՔ 19/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №04112024-08-0027) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Այգաբացի 4-րդ շարք 19/1 հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №04112024-08-0027) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) 1149.4 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Այգաբացի 4-րդ շարք, 19/1 հողամաս**
2) 324.7 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք. Այգաբացի 4-րդ շարք, 19/7 հողամաս**

2025-08-15 15:42:32 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

(վկայական №04112024-08-0027) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 թվականի №1756-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 243.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0459-0002-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Խանջյան փողոցի հարևանությամբ գտնվող 243.25 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0459-0002-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Խանջյան փողոց, 3/29 հողամաս**

2025-08-15 16:33:32 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«18» օգոստոսի 2025 **թվական** N1755-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԺԱՆՆԱ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ժաննա Վարազդատի Մելքոնյանը (անձնագիր՝ AS 0258093, տրված՝ 2018թվականի հուլիսի 3-ին 016-ի կողմից,հաշվառված՝ քաղաք Գյումրի, Ներսես Շնորհալի փողոց 10 շենք 7 հասցեում), 2025 թվականի հունիսի 24-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Ներսես Շնորհալի 10 շենք № 7 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն :

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2025 թվականի հուլիսի 23-ի Շ-1607 գրությունը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2025 թվականի ապրիլի 8-ի N 250657065017 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի մայիսի 30-ի տեղեկանքը, Հրայա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի մայիսի 7-ի եզրակացությունը, Ժաննա Վարազդատի Մելքոնյանի լիազորագիրը Գյումրի համայնքի Ներսես Շնորհալի 10 շենք № 7 հասցեի բնակարանի իրեն հասանելիք բաժնեմասի նվիրատվության ընդունման համար քաղաքացի Սամվել Սարգսի Գևորգյանին լիազորելու վերաբերյալ, 2025 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գյումրի» ցանցի տեղեկանքը, Շողիկ Վարազդատի Մելքոնյանի, Ռուզաննա Վարազդատի Մելքոնյանի, Էմմա Աշոտի Լազգիևայի, Սուլիկո Աշոտի Լազգիևի, անչափահասներ՝ Արտյոմ Սուլիկոյի Լազգիևի, Աշոտ Սուլիկոյի Լազգիևի,Լյովա Համլետի Ենգոյանի հայտարարությունները Գյումրի համայնքից Ներսես Շնորհալու փողոց 10 շենք 7 հասցեի բնակարանը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2025 թվականի հունիսի 24-ին հարուցվել

է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի օգոստոսի 12-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Ժաննա Վարազդատի Մելքոնյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի Ներսես Շնորհալու փողոց 10 շենք, 7 հասցեի 86.93(ութսունվեց ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 22072025-08-0021 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Ներսես Շնորհալի փողոցի 10 շենքի բնակարանների բաշխման նյութերը չեն պահպանվել, հետևաբար վերոնշյալ շենքի 7 բնակարանի հատկացման վերաբերյալ տեղեկատվություն չկա (հիմք `«Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Շիրակի մարզային մասնաճյուղի 2025 թվականի հուլիսի 23 - ի Շ-1607 գրություն):

գ) Շիրակ Գյումրի Ներսես Շնորհալու փողոց 10 շենք 7 հասցեում հաշվառված բնակվում է 8 անձ 1973 թվականից (հիմք՝ 2025թվականի ապրիլի 8-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ N 250657065017 և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2025 թվականի մայիսի 30-ի տեղեկանքներ):

դ) Գյումրու Ներսես Շնորհալի փողոց 10 շենք 7 բնակարանի կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի (հիմք՝ Հրաչյա Մուրադյան անհատական ձեռնարկության 2025 թվականի մայիսի 7-ի եզրակացություն):

ե) Քաղաքացի Ժաննա Մելքոնյանը /քաղաք Գյումրի, Շնորհալու փողոց 10 շենք, 7 բնակարան/ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչ օրս (հիմք՝«Հայաստանի Հանրապետության էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2025 թվականի հունիսի 30-ի տեղեկանք):

զ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի՝ Ժաննա Վարազդատի Մելքոնյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, (հիմք՝ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2025 թվականի մայիսի 26-ի N ՍՏ-02052025-99-0325 տեղեկանք):

է) Քաղաքացի՝ Ժաննա Վարազդատի Մելքոնյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

